ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ

0010 ք. Երևան, Կառավարական տուն 1

№ 02/05.5/18342-2025

ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ-ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ
ԴԱՎԻԹ ԱՌԱՔԵԼՅԱՆԻՆ

Հարգելի՛ պարոն Առաքելյան,

Ձեզ ենք ներկայացնում Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովում առաջին ընթերցմամբ ընդունված «Պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների ու պատմական միջավայրի պահպանության և օգտագործման մասին» օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին, «Քաղաքաշինության մասին» օրենքում փոփոխություն կատարելու մասին և «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքում լրացում կատարելու մասին (Կ-1022-10.03.2025-ԳԿ-011/1) Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերի փաթեթի վերաբերյալ Հայաստանի Հանրապետության կառավարության առաջարկությունները, լրամշակված նախագծերը, ամփոփաթերթը, ինչպես նաև նախագծերում կատարված փոփոխությունների վերաբերյալ տեղեկանքները՝ գլխադասային հանձնաժողովում քննարկելու համար.

«Պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների ու պատմական միջավայրի պահպանության և օգտագործման մասին» օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին օրենքի նախագիծ.

1. 1-ին հոդվածի՝ «է4», «է5», «է6» և «ժ1» կետերից «անհատույց» բառերը առաջարկում ենք հանել,

2. Հաշվի առնելով 2-րդ հոդվածով նախատեսվող փոփոխությունը առաջարկում ենք օրենքի նախագիծը լրացնել նոր 3-րդ հոդված հետևյալ բովանդակությամբ՝

«Հոդված 3.

Օրենքի ամբողջ տեքստում «արգելոց-թանգարան» բառը և դրան համապատասխան հոլովաձևերը փոխարինել համապատասխանաբար «հնավայր-թանգարան» բառակապակցությամբ և դրան համապատասխան հոլովաձևերով.»:

«Քաղաքաշինության մասին» օրենքում փոփոխություն կատարելու մասին օրենքի նախագիծ.

1. 1-ին հոդվածից առաջարկում ենք հանել «(այսուհետ՝ Օրենք)» ձևակերպումը՝ հիմք ընդունելով այն հանգամանքը, որ նշված նախագծով «Քաղաքաշինության մասին» օրենքին այլևս հղում չի կատարվում,

2. 1-ին հոդվածի 2-րդ կետից հանել «անժամկետ» բառը՝ հիմք ընդունելով

«Պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների ու պատմական միջավայրի պահպանության և օգտագործման մասին» օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» օրենքի նախագծում կատարված փոփոխությունը:

«Տեղական ինքնակառավարման մասին» օրենքում լրացում կատարելու մասին օրենքի նախագիծ.

1. 1-ին հոդվածից առաջարկում ենք հանել «(այսուհետ՝ Օրենք)» ձևակերպումը՝ հիմք ընդունելով այն հանգամանքը, որ նշված նախագծով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքին այլևս հղում չի կատարվում, միևնույն ժամանակ նախադասության վերջում՝ «.» կետադրական նշանը փոխարինել «:» կետադրական նշանով,

2. 1-ին հոդվածով լրացվող նոր նախադասության «անժամկետ» բառը հանել՝ հիմք ընդունելով «Պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների ու պատմական միջավայրի պահպանության և օգտագործման մասին» օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» օրենքի նախագծում կատարված փոփոխությունը:

Հարգանքով՝

ԱՐԱՅԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ